# ԱՐՇԱԼՈՅՍ ԱՐՇԱՓԵՏԵՆ

## ՕՐԱԳԻՐ ԶՄԻՒՌՆԻԱՅ

### ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՔԱՆԵՒԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ — ԶՄԻՒՌՆԻԱ ՇԱԲԱԹ 15 ՄԱՐՏ 1869 — ԹԻՒ 853


## ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԶՄԻՒՌՆԻԱ, 14 ՄԱՐՏ

Թէպէտև Եւրոպիոյ ընդհանուր խաղաղութիւնը առայժմ հաստատուն կըսեպնենք, սակայն այն ամէն ծանր պատճառները՝ որոնք պատերազմ կըսպառնային և կրսպառնան, դժբաղդաբար անհետ եղած չեն ամենին, այլ ընդհակառակն օրըստօրէ ևս առաւել կրծանրանան. հետևաբար հասարակաց անհանդարտութիւնը կըշարունակուի և կառավարութիւնները յոտից ցոլուի ահագին կերպիւ սպառազինեալ կրսպասեն, չորս կողմերնին նայելով միշտ թէ փոթորիկը ուսկի՞ց պիտի ծագի. քանզի հորիզոնը սև ամպերով բեռնաւորեալ կրաեռնին։

Եւրոպիոյ մէջ և մասնաւորապէս 'ի Գաղղիա և Աւստրիա ծանր լուրեր կըպարտին Բրուսիոյ փառասիրական դիտաւորութեանց վրայօք։ Անցեալները Վէննայի Լ՝Օրդան լրագիրը հետևեալ կերպիւ յառաջ կրբերէր այս լուրերը՝ եօթը յօդուածի մէջ ամփոփելով զանոնք։

1. Լիենոս գետոյն վերայ պատերազմը անհրաժեշտ է եղեր, Բրուսիոյ պաշտօնական անձանց ենթադատութեանը համեմատ։

2. Բրուսիոյ արքունի ընտանեկան խորհրդակցութեան մը մէջ, ուր ներկայ գտնուեր են եղեր բաց 'ի թագաւորաղն իշխաններէն՝ քանի մը զօրապետներ ևս, այս պատահելի դէպքին վրայօք զանազան անօրէնութիւններ եղեր են։

3. Անյապաղհոգ պիտի տարուի եղեր Լիենոսի ելեզերքը եղած պահպան զօրաց թիւը աւելցնելու։

4. Բրուսիոյ մէջ գաղտնի գաւադրութիւններ կը պատրաստուին եղեր. որոց նպատակն է Աւստրիոյ երկրին վերայ յարձակիլ։

5. Բրուսիացի բազմաթիւ լրտեսներ և պաշտօնատարներ՝ գրպաններին ոսկիով լեցուն՝ գաղտնապէս կը շրջագային եղեր Աւստրիոյ կերմանական գաւառները։

6. Բրուսիոյ կառավարութիւնը Պոհեմիայի մէջ ծածուկ կերպիւ խոովութիւն կրսերմանէ եղեր՝ դրդռելու համար զժողովուրդը, որ Աւստրիոյ կայսեր լուծը վրանէն նետեն։

7. Պերլինի մէջ Հոյէնցօլլէրն թագաւորական կերդաստանին մէկ իշխանին պատկերովը՝ իբրև թագաւոր Հունգարիոյ, դրամներ կըկոխուին եղեր, զորս պատրաստ պիտի պահեն շրջաբերութեան հանելու 'ի դիպուածի ապստամբութեան Հունգարիայի մէջ, կամ երբոր Բրուսիոյ զօրաբանակը այս երկրին տիրելու ըլլայ։

Այս ծանր լուրերը թէպէտև իրև ստութիւն և զրպարտութիւն՝ կըհերքէ Պերլինի Գազէթ ՝ Ա՝ Ինչ կէս պաշտօնական լրագիրը, այսու ամենայնիւ միթէ այս հերքումը բաւական է հասարակայ միտքը հանդարտեցնելու. վասնզի եթէ նոյն լուրերը հիմնաւոր ալ ըլլան, միթէ Բրուսիոյ թերթերը դարձեալ պարտաւորեալ չեն իրև ստուա և անհիմն տեղեկութիւններ՝ հերքելու զանոնք։

Ամերիկայի Միացեալ Նահանգաց նորընտիր նախագահ Կրէնթ զօրապետին ատենախօսութիւնը կենցաղագէտ անձանց ծանր ուշադրութիւնը դրաւած է։

"Ի մասին արտաքին քաղաքականութեան, ըսաւ նախագահը, այնպէս պիտի վարուիմ ազգաց հետ, ինչպէս որ օրէնքը կըպահանջէ որ անհատները վարուին իրարու հետ։ Ուր որ Ամերիկայի դրօշակը պիտի ծածանի, անդ պաշտպանելու եմ օրէնքը յարգող թէ՛ ամերիկայի և թէ՛ օտարազգի քաղաքացիները, երբոր իրենց իրաւունքը սպառնալիք կըլլայ։ Իմ կողմանէ պիտի յարգեմ ամէն ազգաց իրաւունքը և կուզեմ որ մեր իրաւունքն ալ յարգուին։ Բայց եթէ գտնուին ազգեր՝ որ մեզի հետ ունեցած յարաբերութեանցը մէջ կըմոռնան իրենց պարտքը, կընանք ստիպել զանոնք 'ի կատարումն իրենց պարտեաց"։

Այս պաշտօնական յայտարարութիւնը՝ որ սպառնական կերպարանք մի ունի, անշուշտ սիրով պիտի չընդունուի Եւրոպիոյ մեծ տէրութիւններէն, 'ի բաց առեալ Լիուսիան և Բրուսիան, որոնք համամիտ կերևին Ամերիկայի այժմեան քաղաքականութեանը։ Այս մեծ հասարակապետութիւնը՝ ըստ ամենայն երևմանց՝ կըպահանջէ մասնակից ըլլալ Եւրոպական ծանր խնդրոց որոշմանը. զոր մինչև յայսօր Եւրոպիոյ մեծ տէրութիւնները իրենց սեպհականած են։

Բայց յայտնի է, Ալապամայի դժբաղդ վէճը՝ որ բարեկամաբար լմընցած կըկարծուէր 'ի մէջ Ընդդիոյ և Ամերիկայի տէրութեանց, ևս առաւել շփոթուած է այժմ և այս երկու ազգաց յարաբերութիւնները խոովելու կըսպառնայ։ Թէպէտև Լ՝ոնտոնի ամերիկայի դեսպան միստր Լիվիրեաի Ճ՝օնսըն շատ աշխատեցաւ սիրով կարգադրելու այս դժուար գործը և փոքր ինչ ժամանակ կարծեց թէ իր խաղաղասէր ջանքը յաջողութեամբ պսակուած է, որուն Ընդդիցիներն ալ ուրախութեամբ հաւատացին, սակայն Ամերիկայի ծերակոյտը բոլորովին մերժեց իր դեսպանին ըրած դաշնագրութիւնը, զոր արդարութեան և իրաւանց վերայ հիմնեալ չգտաւ. հետևաբար այս ծանր խնդիրը նորէն և վտանգաւոր կերպիւ մը երևան եղած է. ուստի տարակոյս չկայ թէ Կրէնթ նախագահին սպառնական՝ խօսքերուն մեծ մասը Ընդդիոյ կառավարութեանը կըվերաբերի։

Ընդդիոյ մէջ Իրլանտայի պաշտօնական բրօթէսթանտեկեղեցւոյն ջնջուելուն խնդիրը յառաջ երթալու վերայ է տէրութեան առաջին պաշտօնեայ միստր Կլէդսթընին անխոնջ ջանիւքը. որ այս բարեկարգութեամբ, նմանապէս ուրիշ այս օրինակ՝ Իրլանտայոց նպաստամատոյց կարգադրութիւններ 'ի գործ դնելով, կըյուսայ եղբայրսիրութիւնը հաստատելու ազգին և Ընդդիացւոց մէջ։ Երդեօք աղատասէր առաջին պաշտօնէին նպատակը յաջողութեամբ պիտի պսակուի։ Այս հարցմանը կըպատասխանենք՝ Լ՝ոնտոնի Թայմզ օրագրին զրուցածը յառաջ բերելով. "Իրլանտայի կաթոլիկները բարոյական 'ի սուրբ Գիրս գործոյ, առ սովաւ տեսաք աչօք. որք և այրիք շուրջ զարկեալ գիրն, և զարկալ ի արտաստուրս թանալն՝ խոստովանելով զնարհս և զարարերութիւնս նորա. այլ աւա՜ղ, յորժամ հաւատարիր ընդ Պետրոսովք ժամանակիս մերոյ ակար՝ անբաւական 'ի յարուցումն և 'ի կրկնակի կենդանագործումն նորա։ Գործոյ Թ. 36 գ41։

Ահա այսպէս մահկանացուս լի բարեպաշտութեամբ զընթացսն կատարեաց, զհաւատն պահեաց և Աւետարանական երանութեամբ վերասլացաւ յերկինս յընդունիլ զպսակն վառաց, թողուլով 'ի կենցաղի դուստր մի՝ առաքինութեամբ և բարեհնութեամբ զաւակօք բարգաւաճեալ։ Արեանառու մերձաւոր է սորա և դիտնական Մկրտիչն մատենագիր որ 'ի Մոսկուա։ Տէր զհոգի հանգուցեալն 'ի լոյս երեսաց իւրոց հանեալ՝ կազդուրեսցէ և ըստ սիրոյս յետնամեայսիցն հոգւով սրբով։ Ամէն։

Հանգի՛ր Լ՝ամն, հանգի՛ր յանդորր յանձուկ շիրմի,
ուր կենցաղոյս ապէտ այլ ոչ քեզ հոտոտի.
վիճակ ընդ սուրբս՝ քեզ ընդ ընտիրս հաղորդի,
յանքոյթ յանխոնջ խորան երկնից՝ վայր ցանկալի։

Քոյդ արդասիք ասի կենաց թէ ջնջեսցի,
անդ 'ի յիրկինս ոսկեղինեօք յաւերժասցի.
ո՛չ ըստ մերում լոյծ երախտեաց փոյթ ցնդելի,
այլ յաւիտեանս յաւիտենից անջնջելի։

Ա՛ռ դու լրիկ զողբերգականս յաւուտ սրտի,
որ ըստ եղբօր սիրէր քեզ միշտ աստ 'ի մարմնի.
վա՛րկ բաւական վճար վերջին դառն ողջունի,
բան անյարիր՝ պարդև սգոյ յոյր դամբանի...։

Տ. Ց։

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ԱՆԳԻՒՏ ԿՈՐՈՒՍՏ Ի ԿԱԼԿԱԹԱ

Բացամեկնեալ ամէն նահանջէ՝ որ տարեդրոյն 'ի ծոցն Կրէր Իժ, 'ի վերջին աւուր թափեալ զթոյն իւր մահաբեր 'ի պայազատն պարոն Լ՝ոյն Յովսէփ Լ՝ինեան, որ ըստ անուանն արդարև մինէր և յաստուկ 'ի պատուանդանէն անդամոց Հայ հաւատակութեան քաղաքիս, որպէս և դիմակրութիւն ազգայնոյն յինքն դրաւեալ՝ հագիւ որ ոչ զտեալ 'ի տիւոր հանդիսին ուղղափառութեան, որոյ հոգին յետ դառնալոյ առ Աստուած, մարմինն անթերի շքով, պատարագօք և պաշտամամբ յանձն եղեալ 'ի ԲԸնածին մայրն հասարակաց ըստ վճռոյն. Ծնող. գ. 19։ Յոան. ժբ. 7։

Նկարագիր կենաց և բարուց առնս պատուականի՝ եթէ ոչ ըստ Յորոյ 'ի տիպն հանդիսնակ, և ոչ մասամբ իւիք տարբերեալ. զի չև ևս հասեալ 'ի կէտ կատարեալ հասակին կենաց՝ բառնիր ձախորդութեան ձգեալ զձեռն 'ի նա և բարձեալ զպսակն 'ի գլխոյ. ում մնացեալ զաւակունք երիք արու և էգ՝ իբրև նեցուկ և յենարան վայելչութեան կենացն. որոք և անդադար զփառս վերիրդելով՝ պնդեալ զմէջն զօտուէն ստոյգ սրբութեան։ Զեղեալ նախանձուն ձախողակի բաւական, անդրէն ձգեալ զձեռն 'ի յափշտակութիւն երկուց արու զաւակացն. որք 'ի գարնանոյ ժամանակին կենաց՝ յորում վթթեալ ծաղկամբ 'ի պտղաբերութիւն հանդերձեալ, մին յետ միոյ անկեալ մահուամբ սլացան 'ի գաւառ վերին։ Հայրն ծնող՝ որչափ յաղխ ծնողականին տաչարեալ տաղնապեալ, այնքան և ճշմարիտ հաւատով՝ յաստուած և սիրովն առ Աստուած զբաց եալ. որպէս թէ երկոքին լոմայք իր 'ի գանձանակն Աստուածային՝ շուրջ զաթոռով չնորհաց տուողին և կոչողին ունէին երանութեամբ բարգաւաճիլ։ Ասէր միշտ՝ չէին նորա իմ, այլ նորայն՝ որ ետ ինձ և կառ ամենարհեալ կամօքն. ես ևս գնալոյ եմ առ նոսա և ոչ նոցա յիս դառնալ։

Ընդ ներքին ազգատիպն անողորմելի՝ զուղղութեան եղև և արտաքին կորուստ շափաւոր զոյց և կարեաց. այլ ոչինչ ընկմել ստանալ գնա մայթացեալ 'ի հողին՝ բարեպաշտութեամբ լցեալ և զբաց եալ. այո՛ ըմբշամարտ ընդ պէսպէս պատահարս ցաւոցն, մինչ նախանձեալ չտիթց ձախորդութեան՝ անդրէն 'ի նա ձգեալ զձեռն և արկեալ զանձն 'ի մահճի չարչարանաց. քանիցս խաղացուցեալ 'ի մարմնի զուր և դկորոյ, բացեալ զվէրս լայնարերան քաղցկեղին 'ի մասունս տարածեալ անբուժելի ճիրանացն ներգործութեան։ Ուր և ընդ սին զաւուրս երկար դնու զբրութեամբ հոգւոյն պատերազմեալ և յաղթեալ քաջութեամբ արդարև, սակայն զոգջիր քամոյօքն հոսեալ զարիւն և զկենսական հոգին. թէպէտ զամն սակաւս 'ի պատկերի յոտն եկայ իբրև մարդոյ՝ բայց ցամաքեալ և պակասեալ տարերօք 'ի տիպ մեռելոյ. ահա՛ և այսպէս մինչ զօսացեալ և բուն տարին, ա՛ռ զիւրեան հանգիստ 'ի հաստակի 61 ամաց։

Ընդ հասարակ կեանս նորա տպաւորեալ և 'ի հոգւոջ երիք անհասարակ ձիրք չնորհաց. այն է խաղաղասիրութիւն, ընտանեսիրութիւն և ողորմածութիւն. զի ուր բուրէին զարշահոտութիւնք խոովութեան, անդ թափէր զանուշահոտութիւն ճգանց և ջանից 'ի սէր և 'ի միաբանութիւն։ Ա՛ռ վիշտս ընտանեաց լինէր ցաւակից և համաչունչ ամենայնի կարեօք. եթէ 'ի դէպ զայր այրեաց և որբոց, ըստ մարթելոյն չպակասէր 'ի նպաստից. առնէր աչն՝ անձանօթ 'ի ձախոյն։ Զընթերցանն մեր այժմեակաւ 'ի սուրբ Գիրս գործոյ, առ սովաւ տեսաք աչօք. որք և այրիք շուրջ զարկեալ գիրն, և զարկալ ի արտաստուրս թանալն՝ խոստովանելով զնարհս և զբարերարութիւնս նորա. այլ աւա՜ղ, յորժամ հաւատարիր ընդ Պետրոսովք ժամանակիս մերոյ ակար՝ անբաւական 'ի յարուցումն և 'ի կրկնակի կենդանագործումն նորա։ Գործոյ Թ. 36 գ41։

Ահա այսպէս մահկանացուս լի բարեպաշտութեամբ զընթացսն կատարեաց, զհաւատն պահեաց և Աւետարանական երանութեամբ վերասլացաւ յերկինս յընդունիլ զպսակն վառաց, թողուլով 'ի կենցաղի դուստր մի՝ առաքինութեամբ և բարեհնութեամբ զաւակօք բարգաւաճեալ։ Արեանառու մերձաւոր է սորա և դիտնական Մկրտիչն մատենագիր որ 'ի Մոսկուա։ Տէր զհոգի հանգուցեալն 'ի լոյս երեսաց իւրոց հանեալ՝ կազդուրեսցէ և ըստ սիրոյս յետնամեայսիցն հոգւով սրբով։ Ամէն։

Հանգի՛ր Լ՝ամն, հանգի՛ր յանդորր յանձուկ շիրմի,
ուր կենցաղոյս ապէտ այլ ոչ քեզ հոտոտի.
վիճակ ընդ սուրբս՝ քեզ ընդ ընտիրս հաղորդի,
յանքոյթ յանխոնջ խորան երկնից՝ վայր ցանկալի։

Քոյդ արդասիք ասի կենաց թէ ջնջեսցի,
անդ 'ի յիրկինս ոսկեղինեօք յաւերժասցի.
ո՛չ ըստ մերում լոյծ երախտեաց փոյթ ցնդելի,
այլ յաւիտեանս յաւիտենից անջնջելի։

Ա՛ռ դու լրիկ զողբերգականս յաւուտ սրտի,
որ ըստ եղբօր սիրէր քեզ միշտ աստ 'ի մարմնի.
վա՛րկ բաւական վճար վերջին դառն ողջունի,
բան անյարիր՝ պարդև սգոյ յոյր դամբանի...։

Տ. Ց։

պէս զէնընկեց ընելու համար՝ հարկ է կատարեալ հաւասարութեան մէջ դնել զանոնք բողոքականաց հետ, որպէսզի կարողանան 'ի միասին անձնանուէր ըլլալ ընդհանուր օգտիցը"։ Լրագրաց պատմածին նայելով՝ յիշեալ եկեղեցւոյն ստացուածոց արժէքը 16 միլիոն լիրա սթերլինի կը հասնի, որուն եկամուտը մինչև ցայսօր օրինաւոր կերպիւ չէր բաժնուեր։ Այժմ ազգութիւնը եկեղեցականաց ամսականները ու եկեղեցական պիտոյից ծախքը արդարապէս սահմանելէ ետև, դարձեալ 8 միլիոն լիրայի չափ կաւելնայ։ Միսսը Կլէտսթըն կառաջարկէ, որ այս աւելցած ստացուածոց եկամուտը՝ 'ի նպաստ Իրլանտայի չքաւորաց սահմանուի։

Սպանիոյ գործքերը տակաւին մի և նոյն անորոշ վիճակի մէջ կը գտնուին։ Մարտի 1ին գիշերը ըստ նոր տումարի՝ ազգային երեսփոխանաց մեծագոյն մասը 'ի ժողով գումարուեցան Օտերակուտին մէկ սրահին մէջ, ուր դաղանի խորհրդակցութեամբ որոշուեցաւ թէ՝ ազգային խորհրդանոցը միապետութեան սկզբունքը քուէարկութեամբ վաւերացնելէ ետև, նոյնիսկը սպանիայի ժողովուրդը հրաւիրուի իւր թագաւորը ընտրելու։ Սակայն Բրիմ զօրապետը՝ ինչպէս ուրիշ անգամ զրուցած էր, այս խորհրդակցութեան մէջ ևս կրկնեց թէ Պուրպոնեան գերդաստանին վերադարձը անկարելի է։

Սպանիական նոր սահմանադրութեան խմբագրութիւնը յաջողութեամբ յառաջ կերթայ ազգային երեսփոխանաց գործունեայ ջանիւքը։ Յիշեալ նոր օրինադրութեան համեմատ՝ ամէն կրօն ազատ պիտի ըլլայ, բայց ազգային միրոզ կրօնը՝ կաթոլիկութիւնը պիտի ըլլայ։ Քաղաքական ամուսնութեան վրայօք առաջարկութիւն մի եղած էր ազգային խորհրդանոցին մէջ, բայց առժամանակեայ կառավարութիւնը՝ զուշակելով թէ այս խնդրոյն որոշումը՝ եկեղեցականաց ու ժողովրդեան կրօնասէր մասին մէջ դրդռութեան առիթ մի պիտի ըլլայ, աղաչեց որ յիշեալ առաջարկութիւնը ետ առնուի առայժմ, և ուրիշ ժամանակուան մնայ անոր քննութիւնը և որոշումը։

Գաղղիոյ մէջ նշանակութեան արժանի քաղաքական երևելի դէպք մի չկայ բաց 'ի Պէլճիքայի երկրամուղոյն վէճէն, որ ժամանակէ մը 'ի վեր այս երկու կառավարութեանց բանախօսութեանցը ենթակայ եղած է։ Լրագրներէն ոմանք կըսեն թէ Փարիզի մէջ յանձնաժողով մի պիտի հաստատուի այս գործոյն համար և կը յուսան թէ շուտով ու բարեկամաբար պիտի կարգադրուի։ Միւս կողմանէ կը լսեմք թէ Անգղիոյ կառավարութիւնը իւր խաղաղասիրական միջնորդութիւնը առաջարկեր է 'ի կարգադրութիւն յիշեալ տարաձայնութեանը, որ թէպէտ փոքրիկ գործ մի կերևի առայժմ, բայց կրնայ ծանր հետևութիւններ ունենալ։

Գաղղիոյ, Աւստրիոյ և Իտալիոյ մէջ ըլլալու դաշնակցութեան խօսքը կը շարունակուի միշտ, թէպէտև Ֆիորէնցայի պաշտօնական օրագիրը կըսէ թէ բոլորովին անհիմն է այս լուրը։

Աւստրիոյ կայսրը իւր երկրին զանազան գաւառաց այցելութիւն կընէ, և առայժմ Թրէստ գտնուելով՝ Իտալիա թագաւորին բանակի օդնականներէն մէկը Տէլլա Ռոքքա զօրապետը յիշեալ քաղաքը յուղարկեցաւ՝ իւր վեհապետին կողմանէ Ֆրանչիսկոս Յոսէփ կայսեր զալուստը շնորհաւորելու համար։ Վէննայի Բրէս լրագիրը կըսէ թէ այս բարեպատեհ առթիւ Վիքթոր-Էմմանուէլ թագաւորը ինքնագիր նամակ մի յուղարկեց Աւստրիոյ կայսեր։

Պօսնայի վսեմ. Օսման փաշան, որ օգոստափառ Սուլթանին կողմանէ միևնոյն պաշտօնիս Թրէստ յուղարկուած էր, մարդասիրական պատուով ընդունուեցաւ Աւստրիոյ կայսերէն։ Նոյն գիշերը թատրոնին մէջ Օսման փաշան Նորին Վեհափառութեան օթեակը կը գտնուէր։

Աթէնքի օսմանեան դեսպան վսեմ. Ֆոթիատիս Պէյը՝ ուղեկցութեամբ դեսպանատան բոլոր գործակալաց, ամսոյս 5ին դաղտնական շքեղութեամբ մեկնեցաւ իւր պաշտօնին երթալու։ Նմանապէս քիրիաղէրեին՝ որ Կ. Պոլսոյ հելլենական դեսպանատան առաջին խորհրդոյ քարտուղար էր, գործակատարի պաշտօնիս Կ. Պոլիս հասաւ, և մինչև նոր դեսպանի մը որոշուիլը՝ դեսպանական գործքերը պիտի տեսնէ։ Ըսելէ որ այս երկու սահմանակից տէրութիւնց մէջ տարաձայնութիւնները վերջանալով քաղաքային յարաբերութիւնները վերահաստատուեցան։ Ստոյգ է թէ Հելլենական կառավարութիւնը մեծ տէրութեանց յայտագիր մի յուղարկած է, որուն մէջ կը բողոքէ ընդդէմ նոր օրինադրութեանը՝ զոր Խարբարդն Պուռը հաստատեց օսմանեան հպատակութեան համամամբ, այսու ամենայնիւ յիշեալ յայտագրոյն ուշադրութիւն չմատուցուեցաւ մեծ տէրութեանց կողմանէ, յառաջ բերելով թէ նոյն օրէնքը բոլոր օտար տէրութեանց հպատակաց կը վերաբերի։ Հետևաբար Հելլատան միայնակ իրաւունք չունի դանդատ ընելու անոր դէմ։

# ԱԶԳԱՅԻՆ

Լրագրոյս նախընթաց թուովը՝ Ադէրսանդրիոյ մեր թղթակիցներէն մէկուն՝ յարգոյ Յ. Զ. աղային մէկ նամակը հրատարակեցինք. ուր գրուցած էր թէ՝ նոյն քաղաքը գումարեալ ազգային ընդհանուր ժողովոյն մէջ մեծաւ Յակոբեան Թագաւոր աղային կարգացած տեղեկագրին օրինակը չկրցի ձեռք ձգել՝ որ ձեզ յուղարկեի։ Այս շաբթու նոյն տեղեկագիրը առ մեզ յուղարկելու հոգ տարած ըլլալով, կըփութամբ հրատարակել զայն՝ մեր ընթերցողաց ուշադրութիւնը այս կանոնաւոր պատուական գրուածին վերայ հրաւիրելով, որ անտարակոյս ուրախալի տպաւորութիւն մի պիտի ընէ բոլոր ազգասէր եւ սահմանադրասէր անձանց վերայ։ Հրատասիկ այս տեղեկագիրը։

Մեծարու տեսչը,

Մօտ տասնեւմէկ տարի է որ՝ ազգային հոգաբարձութեան պաշտօնը փոխանորդաբար վսեմափայլ Ներսէս փաշային, ըստ կարողութեան վարեցի։ Այսօր ձեր յարգութիւնը հոս գումարելուս նպատակն է՝ ազգային փոխ—հոգաբարձութենէ վերջին ծայր յղնուած ըլլալը, և իմ այս վեցերորդ անգամ թեկնածնօր տուած հրաժարականս Ներսէս Վսեմութենէն վերջապէս ընդունուած ըլլալը իմացնել ձեզ։

Ցայտնի է թէ վսե. Ներսէս փաշան այս ծանր պաշտօնը ինձ յանձնած օրէն 'ի վեր, այս մասին իմ ըրածս և իմէ ազգային գործերուն ինքն պատասխանատու էր։ Զոհ եմ այսօր որ, Ներսէս ինձ տուած այս պատիւը անարատ պահելով կը հրաժարիմ, որով Ներսէս Վսեմութեան պատասխանատուութիւնը կը դադարի այս օրուընէ։ Հետևաբար նոր ընտրուելի հոգաբարձուն բացարձակ պատասխանատու է ընդհանուր ազգին առջև։

Այս պատճառաւ կը փութամ այսօր ասոն տասնամեայ աշխատանքին վրայ համառօտ քաղուած մի ընել, և ազգիս անցեալը ներկային հետ բաղդատել՝ անոր արդի կացութիւնը ձեզի ճանչցնելու համար։

Ազգային հաշիւները ինձ յանձնուած ժամանակ, ինչպէս տումարներն ալ ցուցուցին, տարեկան եկամուտը հազիւ թէ 10—12,000 դահեկանի մօտ ըլլալով, մէկ այնչափ գումարի հաւար ալ ազգային օգնութեանը կարիք մնն ունի։ Հետևաբար իմ նախորդիս յառաջ եղած հոգաբարձութիւնը 2574 զուրուշ պարտք մի թողլով՝ իմ օրովս իւր հաշիւը վճարուած է։

Փոխ—հոգաբարձութեան երկրորդ տարին էր, որ ազգային եկամուտին հազիւ թէ 20,000 զուրուշ աւելցուցեր էի, ձեռք զարկի տարին 60 լիրա եկամուտ բերող հին տուն մը 'ի հիմանց նորոգելու համար՝ ողջ ստակ 235,000 զուրուշ ծախսի դուռ մի բանալով՝ եկամուտս ազգիս մը պատրաստել։ և այս՝ ոչ ազգային արկղին ծանրութիւն մը տալով՝ և ոչ մէկ ազգայնէ ստակ մը պահանջելով, այլ ըստ կարողութեան իմ անձնական քսակէն փոխ ստակ անցնելով, նպաստակս յառաջտարի։ և այսօր ուրախ եմ ըսելու թէ յիշեալ հաստատութիւնը մնայն՝ տարին 700 լիրայի եկամուտ մը կը թողու ազգին։

Այս՝ և այլ կողմանէ ծառայեալ եկամուտներով մէկ կողմէն ազգին պէտքը հոգալով, միւս կողմէ պարտքը գոցելով, ժամանակ մի եաթը ձեռք զարկի դպրոցը ընդարձակելու։ Անկէ ետքը հոգ տարի աղջկանց վարժատուն մը ևս հաստատելու, վարժապետները շատցնելու, ազգատաշակերտաց և աշակերտուհեաց հագուստը հոգալու, եկեղեցւոյ պոյծաւորութիւնը հաստատուն պահելու, աղքատ ընտանեաց հանդստատեղի մը հաստատելու, տեղացի և պանդուխտ անանկաց նիւթապէս օգնելու, ազնոց հիւանդաց համար վարպետ բժիշկ մը սահմանելով և անտէր հիւանդները Եւրոպական հիւանդատունը դրկելու, աղքատ ճանապարհորդները իրենց հայրենիքը յուղարկելու ևայլն ևայլն. այնպէս որ տարեկան ծախքը հանուած այսպէս. զի դնի Զատիկն 'ի 13 Ապրիլի, զոր մեր նորացուցեալ դնեմք 'ի 25, յորում լուսին լինելոյ է 23օրեայ՝ առեալ զծնունդն յ3 Ապրիլի և աւագ լուսն 'ի 16, յաւուր ուրբաթու. որոյ յառաջիկայն կիւրակէ՝ այն է 'ի 18 Ապրիլի լինիր կատարումն Զատկական տօնի. իսկ յամենայնումն եօթնեկաւ ընդդէմ կանոնի՝ ընդէ՞ր։

Այս 'ի խափանել զծառայութիւն բարեգոյն լինելոյ է ըստ մեզ՝ յամենայնոսիկ Հ տարեգրէն՝ ինն եակ վերապրով և երեակ եօթներեակաւ փոխարէն Շ տարեգրոյն 'ի կիր արկանել. և յայնժամ ոչ 'ի 13 կամ 'ի 25 Ապրիլի, այլ 'ի վեցն կատարի Զատիկն ըստ վկայութեան Աստուածաշունչ գրոյն և վաղոյ ժողովոյն Նիկիոյ. որպէս առեալ Հեթում 'ի բանս իւր՝ հաստատէ. որպէսզի յետ այնորիկ յայտոնի դիպուածս ծառայութեան մի յառաջ եկեսցէ վրիպակ իմն յարևելեան եկեղեցիս ազգայ՝ ըստ ոմոյ հին տումարին։ Սրբազան կանոն ժողովոյն Նիկիոյ՝ օրինադրէ զսահմանմունս Պասքի յառաջին կիւրակէի յետ չորեքտասանորդի աւուր լուսնի, այն է աւագ լրման. բայց եթէ չորեքտասանորդ օրն իցէ կիւրակի, թողցի յաջորդ կիւրակէին՝ յետ եօթն աւուրց։

Արդ յետ այսչափս ըստ կարի նկնախոհ հեղինակին գնելոյ յանգիման ներկուս տումարագիտաց 'ի քննել, խնդրի խոնարհութեամբ՝ զի եթէ վրիպակ ինչ գտեալ 'ի հաշիս, ուղղել սիրով և անբասիր տանել զաշխատասէրն ըստ կարի. որ ո՛չ առաջաբաշխ է և ո՛չ ներհուն արուեստից մոգութեան։

Գատուելի խմբագիր Արշալուսոյ Արարատեան.

Ի հաւատի աղբերէ հաղորդեալ մեր երբեմն ղեկանդերձանաց Աստուածամերձ տեառն Մ. կաթուղիկոսի առ հնարս բարձման և ուղղութեան ծառայութեան՝ որ 'ի մէջ մեր և Յունաց, չգիտեմք թէ յաջողեա՞լ երանելոյն թէ ոչ։ Բայց զայսմանէ հրատարակեցաք միջոցաւ թիւ 834 լրագրոյն ձեզ ոչ թէպէտ ցոյս վայր ոչինչ ընկալաք յուսաներէ զհամարումն առ այն, այսու ամենայնիւ ինքնակոչ լինելիք զարձեալ հակիրճ ծանուցմամբս՝ առ հաճեցուցուրք Հարս և եղբարս կրօնի։ Ուստի եթէ զայս ծանօթութիւն ոչ համարիք խափան բարեաց կամ ձնասակար 'ի դիտել, հաճեսջիք աղգասիրաբար յիրեան ընծայել Բանասիրականաւ պատուական լրագրոյն ձերոյ 'ի տեղեկութիւն հասարակութեան. որով շնորհակալ կացուսջիք զառաքիչն 'ի ձեզ, որ ասի զոլ

Մին յետին եկեղեցական Գալիկաթայու Հայոց։

## ԲԱՆ ԻՆՉ ՑԱՂԱԳՍ ԾՈՒԱՁԱՏԿԻ

Ծառաստիկ լինի՝ յորժամ Հայք և Յոյնք երկպառակին 'ի տօնակատարութեան Զատկի 'ի միասին 'ի միում կիւրակի. զի եօթնեկաւ միով մին քան զմիւսն յառաջկ 'ի տօնակատարութեան. և այսու պատճառաւ պատահի ինչպէս բազում։ Այս վրիպակ ծառութեան՝ չորիցս ասի պատահիլ 'ի մէջ 532 շրջանին մեծի։ Ի թուականս պատահեալ և պատահելի ծառութեան, նշանաւոր է Շ տարեգիրս մեր Իննեակ վերադրով և երբեակ եօթներեակաւ. որպէս պատահեալ'ի նմին տարեգրի յամի Տեառն 1634, յամին 1729, յամին 1824։ Գուշակի պատահիլ ևս յամի Տեառն 1908, որպէս և զկնի յամի Տեառն 2071։

Ի դիպել առայելոյս՝ վերադիրն գոլով 9 և եօթներեակն 3, ծնունդ Զատկական լուսնի անկանի 'ի 24 Մարտի. յորմէ հաշուեալ աւուրս շրջեբտասան, աւագ լրումն ըստ հնոյ տումարին գայ 'ի 6 Ապրիլի յաւուր կիւրակէի. բայց ոչ կատարեալ Զատկին՝ անկանի յաջորդ կիւրակին։ Իսկ ըստ Յունաց՝ ընդ ամն ընդ այն վերադիրն լինի 10. որով ծնունդ Զատկական լուսնի գայ 'ի 23 Մարտի, և աւագ լրումն 'ի 5 Ապրիլի յաւուր շաբաթու. և 'ի հետևեալ աւուր կիւրակէի 'ի 6 Ապրիլի կատարի Զատիկն ուղիղ և ո՛չ ըստ մերում տեսակ, որպէս վկայէ բարեպաշտ թագաւորն մեր Հեթում յատանաւոր բանս իւր՝ սկսեալ, «Որ ծառայեալ եմ բիւր տխտից»։ ԵՒայլն։ Տե՛ս 'ի վերնանի Մխիթարայ Աստուածաշնչի։

Գուշակի դարձեալ ծառաստիկ՝ յորժամ վերադիրն 9, եօթներեակն մին, և զկիր տարւոյն Ղ. որպիսի է տեսանել յամ Տեառն 1957. սակայն ոչ ընդ հաւատոյս մնանել. զի թէպէտ 'ի նմին ամի աւագ լրումն լուսնի ըստ տումարի Յունաց դնի 'ի 5 Ապրիլի յաւուր հինգշաբաթու և ըստ մերում 'ի 6 Ապրիլի յաւուր ուրբաթու, սակայն տօն Պասքին կատարի 'ի միասին յամեն Ապրիլի։

Եկեսցուք արդ 'ի նշանարանս ծառաստիկի յամին Տեառն 1908, յորում տարեգիրն Ո և Շ ասի նահանջ. առեալ զհաշիւս ո՛չ 'ի հնոյ՝ այլ 'ի նորոյ տումարէ ըստ կարելւոյն համանաւ այսպէս. զի դնի Զատիկն 'ի 13 Ապրիլի, զոր մեր նորացուցեալ դնեմք 'ի 25, յորում լուսին լինելոյ է 23օրեայ՝ առեալ զծնունդն յ3 Ապրիլի և աւագ լրումն 'ի 16, յաւուր ուրբաթու. որոյ յառաջիկայն կիւրակէ՝ այն է 'ի 18 Ապրիլի լինիր կատարումն Զատկական տօնի. իսկ յամենայնումն եօթնեկաւ ընդդէմ կանոնի՝ ընդէ՞ր։

Այս 'ի խափանել զծառայութիւն բարեգոյն լինելոյ է ըստ մեզ՝ յամենայնոսիկ Հ տարեգրէն՝ ինն եակ վերապրով և երեակ եօթներեակաւ փոխարէն Շ տարեգրոյն 'ի կիր արկանել. և յայնժամ ո՛չ 'ի 13 կամ 'ի 25 Ապրիլի, այլ 'ի վեցն կատարի Զատիկն ըստ վկայութեան Աստուածաշունչ գրոյն և վաղոյ ժողովոյն Նիկիոյ. որպէս առեալ Հեթում 'ի բանս իւր՝ հաստատէ. որպէսզի յետ այնորիկ յայտոնի դիպուածս ծառայութեան մի յառաջ եկեսցէ վրիպակ իմն յարևելեան եկեղեցիս ազգայ՝ ըստ ոմոյ հին տումարին։ Սրբազան կանոն ժողովոյն Նիկիոյ՝ օրինադրէ զսահմանմունս Պասքի յառաջին կիւրակէի յետ չորեքտասանորդի աւուր լուսնի, այն է աւագ լրման. բայց եթէ չորեքտասանորդ օրն իցէ կիւրակի, թողցի յաջորդ կիւրակէին՝ յետ եօթն աւուրց։

Արդ յետ այսչափս ըստ կարի նկնախոհ հեղինակին գնելոյ յանգիման ներկուս տումարագիտաց 'ի քննել, խնդրի խոնարհութեամբ՝ զի եթէ վրիպակ ինչ գտեալ 'ի հաշիս, ուղղել սիրով և անբասիր տանել զաշխատասէրն ըստ կարի. որ ո՛չ առաջաբաշխ է և ո՛չ ներհուն արուեստից մոգութեան։

օր օրի աւելնալով, փոխանակ 20ի մինչև 100—110,000 դահեկանի հասաւ։

Վինջին օրերս էր նաև, ընդարձակ դերեզմանատան մի շինութեանը հոգ տարի, որ կարծեմ զազդայինս մեծապէս զոհ ըրած է, այս օրինակ նուիրական տեղ մը վայելչապէս և յարգանօք պահպանուելուն համար։

Կան քանի մը կարեւոր ընելիքներ ևս, զորս զանց կը նեմ հոս յիշել, և որոնք տարին առ նուազն 200 լիրայի մօտ օգուտ մը կբերեն ազգային արիզին։

Այս պաշտօնը փոխանորդարար ինձ յանձնուելէն 'ի վեր, ազգայինք երեք անգամ իրենց հաշիւները առած են ըստ հրամանի Նորին Վսեմութեան։ Եւ այս ամենէն ետքն էր, որ 1869 Յունուար 19ին ընդհանուր ժողով մի կազմել տուի, ուրանալ ազգային հաշիւները տեսնելու համար առաջարկութիւն ընելով, քուէից առաւելութեամբ արժանացարդ Գէորգ Խաւաֆեան, Գէորգ Լուսարարեան և Միրոյ Ճէվահիրճեան աղաներն հաշիւները նայելու պաշտօնը ստանցան։ և Յունուար 24ին նիստ ընելով տեսան, որ 1864 Հոկտեմբեր 11ին նոյն տաճնուան Թաղական անգամոց ձեռք նոյուած ժամանակը՝ բան արձանագրութեան ադրը յիշեալ շինելն մը նայած պարարերը վճարելով՝ 2130 զուրուշ ևս պատրաստ ստակ ունենալէն ետքը, 1868 Դեկտեմբեր 31, վերջին 4 տարուան միջոցին մէջ 382,774 զուրուշ դոյացած ընդհանուր եկամուտէն 472,963 զուրուշ եղած ծախքը իջեցնելով՝ Եղիպտական ոգի ստակ 109,811 զուրուշ պատրաստ դրամ ունեցեր է։ որոց մեծ մասը տերութեան ապահովի թղթերու շահու գնելով 'ի պէտս եկեղեցւոյ շինութեան պահուած է։

Յիշեալ յարգելիներն իրենց զոհունակութիւնը նոյն տետրակին մէջ յայտնելով ստորագրած են։

Հարկ չէ. ըսել թէ այսչափ միջոցին մէջ ըստ կորզութեանս ո՛րչափ աշխատած եմ ազգիս օգուտը վերնատելու, և անոր պատիւը անարատ պահելու թէ՛ իշխանութեան և թէ՛ օտարաց առջև։ Քանի մը տարի յառաջ խաղալոյի մասիս Գրիգորիի հետ եղած ամենածանր դատը բաւական է ձեզ համոզելու. քանզի գիտէք որ 600,000 Ֆրանք կրպահանջէր, և ինչպէս այս դատը 'ի նպաստ ազգին ըմբնցաւ ուշինչով։

Ազգային թերթերից գործքերը նոյնպէս գիտէք թէ ո՛րչափ ապահովութեամբ և մանրազնին հնարաքանութեամբ քննուած՝ և պանդուխտ հանդուցելոց գոյքը պաշտպանուելով՝ անոնցմէ մէկ մասը հոս իրենց օրինաւոր ժառանգորդաց յանձնուած՝ և մէկ մասը մինչև իրենց երկիրը ապահովապէս գրկուած է իրենց առաջնորդներուն ձեռք։ և մաս մը նաև իրրև աւանդ՝ ազգին պահպանութեան տակ կըմնայ. որոնք ամենքն ալ ազգային մասնաժողովներով ընցած և արձանագրուած ըլլալով, գոհութիւն Աստուծոյ մինչև յայսօր ամենափոքր վնաս մը ալ չէ եղած անոնց ժառանգորդացը կողմանէ։

Եղիպտոսի ազգային կարուածական խնդրոյն նկատմամբ անցեալ տարի շատերը իրենց ուղածին պէս մէյմէկ կերպարանք տուին անոր, և մեզի դէմ քիչ բան չըսին։ Երկոյնամիտ համբերութեամբ այս ամենուն տարի. քանզի իմ բարձրաստիճան դիրքիս վերնանձնական ազնուութիւնը ու պատիւն այնպէս կըպահանջէր. ապահով ըլլալով՝ որ ժամանակը պիտ՝որ ուղղէր անոնց սխալը, և վերջապէս արդարութիւնը պիտ՝որ պաշտպանուէր դարձեալ վսեմա. Նուպար փաշայի ձեռք։ Շատ անգամ ամենա. Նոյայի սրբազանին հետ եղած անսասդ տարաձայնութեանց վրայ ցաւեցայ. զի յանուն իմ՝ Նորին Վսեմութեան ազգասիրական համբաւը չարաչար կըգործածէին։ Նորին ամենա. Սրբազնութեան ատիոց մեկնած ժամանակը այս խնդրոյն վրայօք խորհրդարար երկար խօսելէն ետքը յաւելցուցի, թէ այս վէճին բարի վախճան մի տալու ամենադիւրին ճամբան միմիայն վսեմա. Նուպար փաշային դարձանանը սպասելն է. ինչպէս որ իմ այս կարծեաց մէջ չսխալեցայ, ահա այս անգամ վսեմա. փաշային ներկայութեանը այս գործն ալ ընցաւ յուրախութիւն խաղաղասիրաց, անոր արդարորդ կարգադրութեամբը. որուն պատճէնը կարդացի ձեզ անցեալները։

Վիճակիս առաջնորդական խնդիրն ալ յուսամ թէ խաղաղութեամբ կըմնայ. և այժմեան դարուս մէջ իրաւանց բռնութիւն չըլլալով, բարձրագոյն խտիվին հայրական հոգանաւորութեան տակ ապրող ժողովրդեան մը հոգեւոր աթոռը կըյանձնուի այնպիսի արժանաւոր հովուի մը, որ ո՛չ թէ միայն եղիպտահայոց՝ այլև ընդհանուր ազգին բարիքներ կրնայ հայթայթել երկրիս առատաձիգ վիճակներն շնորհիւ։

Նոր շինուելու եկեղեցւոյն խնդիրը շատ հենցած է մեր մէջ. բայց տեսա այս վայրկեանս ալ հոգացուեցաւ, որ քանի մը պատճառաւ ուշացեր էր։

Ահա կը յանձնեմ ձեզի բարձրա. Խտիվին շնորհուած հրամանագիրը շինութեան համար. զոր տարիէ մը 'ի վեր կըհոգայի ձեռք բերել։ Ահա ձեզի պատրաստ դրամ շինութեան սկսելու. ահա ձեզի տարեկան 140,000 զուրուշի մօտ պատրաստ եկամուտ մը. զոր ոչ տակաւ աշխատութեամբ այս վիճակին հաստատած եմ։ Բերեմն հիմակ աշխատեցէ՛ք եկեղեցւոյն շինութիւնը 'ի կատար հասցնելու։ Ես առանձինն՝ իրրև ազգային անհատ մը, ձեռքս եկած ամեն բարութիւնը և օգնութիւնը թէ՛ առ ազգն և թէ՛ առ ազգատոն՝ ըստ իմ կարողութեանս երբէք չեմ զլանար. և կըխոստանամ ձեռքս եկածին չափ օգնել ձեզ ամեն դժուար պարագայի մէջ՝ եթէ հանդիպելու ըլլար. բաւէ որ սէրը՝ խաղաղութիւնը և միաբանութիւնը չպակսին 'ի մէջն։

Հիմակ սիրով և միաբանութեամբ և անկողմնապահ ոգւով սկսինք նոր հոգաբարձու մը ընտրելու քուէարկութեամբ. և յանձնենք անոր՝ ազգային այս նոր տետրակներն, որ ինչպէս կըտեսնէք՝ տարեգլխին սկսեալ զատ զատ նուած են։

Կըմնայ հիմակ իմ խորին շնորհակալութիւնս յայտնել առհասարակ ամեն անոնց՝ որ իմ տակաւ աշխատութեանցս մեծ յարդ տալով՝ միշտ պատուեցին զիս։

Կըմաղթեմ իմ յաջորդիս դիւրութիւն գործոց. կըմաղթեմ նոա կարողութիւն, կըմաղթեմ նաև ամենամեծ հաստատութիւն։

Աղեքսանդրիա, 23 Փետրուար 1869։

---

Լոնտոնի Թայմս օրագիրը հետաքրքիր նամակը կը հրատարակէ, զոր ազգասէր Հայ մի գրած է՝ Անգլիայի մեծ ազգին կարեկցութիւնը հրաւիրելու 'ի վերայ դժբաղդ նուիրակաց սուրբ Յակոբայ աթոռոյն Երուսաղէմի. որոնք Հապէշստան յուղարկուելոց բարեխօս ըլլալու Թէոդորոս կայսեր առջև վասն ազատութեան անդղլիացի բանտարկելոց։

"Օկնի երկար ու ցաւալի երկբայութեան մի 'ի մասին Սահակ արքեպիսկոպոսին և իր ընկերաց կացութեանը, վերջապէս Հապէշստանէն նամակ մի հասաւ մեզ'ի Ս. Երուսաղէմ, ծանուցանելով ամենա. Պատրիարքին և Հայ հասարակութեանը թէ առայժմ ողջ առողջ են, բայց յետին աստիճան խեղճ ու ցաւալի վիճակի մէջ կըգտնուին։ Արդ ինչպէս յայտնի է ամենուն, յիշեալ եկեղեցականները ո՛չ միայն քրիստոնէական եղբայսիրութենէ շարժեալ ձեռք զարկին այս երկար ու վտանգաւոր ճանապարհորդութեանը. այլև Մեծին Բրիտանիոյ կառավարութեան՝ անդղլիացի բանտարկելոց աղատութեանը նկատմամբ ըրած խնդիրը 'ի գործ դնելու համար։ Անդղլիացւոց պէս լուսաւորեալ և հզօր ազգի մը հաճելի ըլլալու նպատակաւ ո՛չ միայն իրենց կեանքը վտանգի մէջ դրին, այլև յանձնառու եղան դրամական ծանր զոհողութեանց թէ՛ վասն ծախուց ճանապարհին և թէ՛ վասն մեծագին ընծայից զոր հարկ համարեցին հետերնին տանել՝ Թէոդորոս կայսեր մատուցանելու համար։ Իսկ այժմ գրեթէ երկու տարի եղաւ՝ զոր անցուցին զանազան նեղութեամբք և զրկումներով Հապէշստանի պէս երկրի մը մէջ. որուն բնակիչները ոչափ որ բարբարոս՝ նոյնչափ և ապերախտ են. թէպէտև կըպարտաւորէին մարդասէր զգացմունք և երախտագիտութիւն ցուցընել մեզ՝ փոխանակ բարերարութեանցը զորս Երուսաղէմի մեր ազգակիցները չդադարեցան ընելու անոնց։ Բայց ընդհակառակն կըլսեմք թէ մեր գերապատիւ և ամենասիրելի եպիսկոպոսները ամեն կերպ բռնութեանց և անարդանաց ենթակայ ըլլալէ 'ի զատ, մարդոյս կենացը ամենէն հարկաւոր բաներէն ևս զրկուած են։ Տակաւին ո՞րչափ ժամանակ պիտի տեւէ արդեօք այս վիճակը, և այսպիսի ցաւալի կացութեան մը մէջ որքա՞ն կրնան դիմել Անդղլիոյ ազգէն 'ի զատ. որոյ օգտիցը համար առանց վարանելու վըտանգի մէջ դրին իրենց կեանքը։ Զարմանալի է ապաքէն որ, մինչդեռ Անդղլիացիք Հապէշստանի տէր էին և իրենց զօրաբանակին հրամանատարին մէկ խօսքը բաւական էր Հայոց նուիրակները ազատելու, ամենևին հոգ չտարուեցաւ անոնց վերայ. թէպէտև շատ ալէթ գիտէր թէ անոնք արգիլուած էին ապստամբներուն մէկ գլխաւորին՝ Վաքշում Կապայաղին քով"։

---

Կայսերական յատուկ շնորհիւ և հրովարտակաւ 5000 զուրուշ ամսական թոշակ սահմանուեցաւ Կ. Պոլսոյ նախորդ Պատրիարք և Իզմիրի վիճակին Առաջնորդ ամենա. տէր Գրիգոր արքեպիսկոպոսին։ Նորին Արքազնութիւնը մօտերս պատիւ պիտի ունենայ օգոստափառ Սուլթանին ներկայանալու. որուն իր խորին երախտագիտութեան հաւաստիքը և իր հրաժարական յարգանքը ամենախոնարհաբար մատուցանելէ ետև՝ անյապաղ ճամբայ պիտի ելլէ Իզմիր գալու. ուր սրբական ջերմեռանդ սիրով և անհամբերութեամբ կըսպասուի իր հոգևոր հօտէն։

---

"Խառն ժողովը՝ կըսէ Մասիս լրագիրը, նկատելով որ ազգին մէջ վարդապետական ձեռնադրութիւնները խիստ անկանոն կերպիւ կըկատարուին, և այս կարևոր խնդրոյն վերայ ազգային ձեռնահաս իշխանութեան՝ այն է երեսփոխանական ժողովոյ կողմէն օրէնք մը դրուելու պէտքը տեսնելով, դաւառաց Առաջնորդներուն և վանահարց գրեց, որ բնաւ վարդապետ չձեռնադրեն մինչև 'ի նոր Սահմանադրութիւն"։

Կ. Պոլսոյ ազգային 'Խառն ժողովոյն ըրած այս անօրէնութիւնը թէպէտև ազդօղուա է, սակայն ձեռնահաս իշխանութիւն ըսածը օրինաւոր չկրնար ըլլալ, ցորչափ որ նոյն մայրաքաղաքին երեսփոխանական ժողովը օրինաւորապէս չէ կազմուած, այսինքն դաւառական պատգամաւորներ բաւական թուով ներկայ չեն գտնուիր անոր մէջ. հետևաբար իրաց այս վիճակին մէջ՝ իր ըրած կարգադրութիւնները դաւառական Հայոց առջև պարտաւորիչ չեն կրնան ըլլալ. այսինքն եթէ արժան չհամարին, 'ի գործ չեն դներ զանոնք. և իրաւունք կունենան այսպէս ընելու՝ ցորչափ որ 'ի կշիռ չդրուի Ըրլալ-ոյ նախնթացթուոյն մէջ հրատարակեալ յօդուածը՝ որուն վերնագիրն է Օ՞ՆՐ Ո-ԼԳԳՐՈ-ԼԻԵԱՆ արժանի խնդիր մի։

---

# ՅՈՅՍ

## ՕՐԱԳԻՐ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Յոյսը, որ մահկանաց ուրոյս գոյութեան գլխաւոր պայմաններէն մէկն է և անով միայն կարելի մարդս, երբէք չմեռնիր կամ պէտք չէ որ մեռնի։ Ուստի ուրախ սրտիւ կըտեսնենք որ, այս քաղցր և կենսատու անուամբ Ըրմաշու Զարխափան Ս. Աստուածածնի վանքը հրատարակուած բանասիրական տետրակը, երկու տարիէ աւելի դադարմանէ ետև, գոհութիւն Աստուծոյ, դարձեալ'ի լոյս կընծայուի նոյն բարեկարգ վանուց արժանապատիւ և ուսումնական Միաբանութեան աշխատասիրութեամբը, ինչպէս նաև անոր բարեխնամ ազգասէր վանահօր գերա. տեր Գէորգ ծայրագոյն վարդապետին յորդորանօքը և գործակցութեամբը։ Այս պատուական հոգեւոր հովիւը ժամանակ մը Փոխ—առաջնորդութեան գժուար պաշտօնը քաղաքիս մէջ վարած ըլլալով, Հ. փիւռնիոյ լուսաւորեալ ազգայինք բարեպատեհ առիթ ունեցան 'ի մօտոյ տեսնելու և ճանաչելու անոր գովելի առաքինութիւնները, խոհեմութիւնը և ուսումնական հմտութիւնները։ Ուստի քաջալոյս եմք թէ այսպիսի արժանընտիր վանահօր մը ազգասիրական բարենախանձ ջանիւքը՝ Ըրմաշու վանքը օրըստօրէ ևս առաւել յառաջադիմելով, բարի օրինակ պիտի ըլլայ ազգային յեռասանայ վանուց։

Յոյս անուն բանասիրական տետրակը՝ սրոյ առջի երեք թիւերը մեր աչաց առջև ունիմք և որոյ մաքուր և պայծառ տպագրութիւնը նշանակութեան արժանի կըհամարիմք. քսան օրը անգամի 24 երեսով կըհրատարակուի Ըրմաշու վանաց տպարանը։ Տարեկան գինը՝ ճանապարհի ծախիւրն հանդերձ, 3 արծաթ Մէճիտիէ է և բաժանորդագրութիւնը Յունուարի 1էն կըսկսին միշտ։ Յուսոյ գործակցութիւնը Իզմիրի մէջ՝ Սուլթանեան մեծա. Գէորգ ազգային յանձնուած է։ Կըյորդորեմք ուրեմն քաջալոյս ուսումնասէր և բարեպաշտ անձինքը, որ իրենց գործակցութիւնը և քաջալերութիւնը չշլանան այսպիսի պատուական հրատարակութենէ մի, որ ազգային ընդհանուր օգտիցը նուիրուած է։

Խօսքերնիս ըմբնցնելէ յառաջ՝ պարտք կըհամարիմք մեզ մեր անկեղծ շնորհակալիքը մատուցանել Յուսոյ արժանայարգ խմբագրութեանը վասն յօդուածոյն՝ զոր կարդացինք Յունուարի 1 թուոյն մէջ. և որ Ըրլալ-ոյ անդրանկութեան խնդրոյն կըվերաբերի։ Յօդուածոյն հեղինակը ջերմ ազգասիրութիւնք պաշտպանելով նոյն խնդիրը, առաջնութեան պատիւը անկապտելի կըհամարի և կըյաւելցնէ, թէ ազգային

օրացոյցները այս առաջնութիւնը ժամանակ մը իրաւամբ երևելի դիպաց կարգը անցուցին, և յետոյ անորյիշատակութիւնը վերցնելին անիրաւութիւն է։

Մեք մասնաւորապէս և անձնական տեսութեամբ կարևորութիւն մի չեմք կրնար տալ այս խնդրոյն, սակայն ընդհանուր տեսութեամբ, որովհետև յիշեալ յօդուածը արդարութեան սկզբունք մի կը պաշտպանէ, ծանր ուշադրութեան արժանի կը դանեմք. և այս պատճառաւ կը յորդորեմք ուսումնական ազգայինները որ անդամմի աչքէ անցնեն զայն։

---

Ասպէն 908 թուոյն մէջ պարոն Վ. աղարշին տրամախօսութիւնքը կարդացինք, և ցաւօք սրտի տեսանք՝ որ Իզմիրի Լ. Ինֆրմ գաղղիարէն օրագրին վրայօք ըրած խորհրդածութիւնները անձնական կիրքէ ներշնչեալ են և յայտնապէս կոիւ կը փնտռէ. որպէս թէ հայերէն լրագրաց միջոցաւ Ս. Փրկչի հիւանդանոցին վրայօք եղած բանակռուութիւնները և ուրիշ ազգային զանազան վէճերը բաւական չեն, կուզէ գաղղիարէն լրագրի մը միջոցաւ ևս ազգային վէճ մի բանալ՝ տեղեկութիւն օտարաց։ Այո՛, անոր նպատակը այս է. քանզի մինչդեռ Լ. Ինֆրմի Հայ խմբագրին տաղանդը և ընտիր գրիչը՝ Իզմիրի մէջ օտարազգի դիանականներէն գովութիւն կընդունի, բոլոր հասարակութենէ մեծ քաջալերութիւն կը ստանայ և Հայ ժողովրդեան պատիւը կաւելցնէ, մեր պարոն Վ. աղարշը անպիտան թերթ մի կը համարի զիյշեալ օրագիրը, արևելքը և արևմուտքը կը խառնէ և անոր խմբագիրը հանդուցեալ Մեղ-ի Մէջ-իեէյին կը յուղարկէ։ Ո՞վ չզարմանար իրաւ լուսաւորեալի մը այսպիսի ազգասիրութենէ վերայ...։ Բայց մեք չեմք կարծեր ամենեին որ Կ. Պոլսոյ լուսաւորեալ Հայերը պարոն Վ. աղարշ արամախօսին հետ համամիտ ըլլան։

—Յիշեալ լրագիրը՝ Մարտի 8 թուոյն մէջ կը գրէ.

«Կը լսենք թէ Խառն ժողովը բարձրա. Խրտիվին նամակ մը գրեր է. զոհութիւն յայտնելով՝ որ Եկեղեցոյ կալուածական խնդիրը երկու կողման համաձայնութեամբ կարգի դրուեր և միանգամայն Եկեղեցոյ թեմական իրաւունքը յարգուեր է»։

Եթէ յիշեալ լրագրոյն ըսածը ստոյգ է, շատ կը ցաւիմ. քանզի Խառն ժողովը սխալ ընթացք մի բռնած է. որ Ս. Երուսաղէմոյ թեմական իրաւանց խնդիրը պիտի չփոթէ և վտանգը պիտի աւելցնէ։ Կ. Պոլսոյ ազգային Վարչութիւնը իր շնորհակալութեան նամակը պէտք էր վսե. Նուպար փաշային ուղղել. որ իր սովորական ազգասիրութեամբը բարեկամաբար կարգադրեց կալուածական խնդիրը. հետևաբար թեմական ծանր խնդիրն ալ կարող է արդարապէս կարգի դնելու. քանզի բարձրասլաքիւ Փոխարքայն՝ որ այսպիսի չնչին գործոյ վրայօք դրդելու ժամանակ չունի, Եղիպտոսի այս տեսակ ազգային գործքերը իր սիրելի նախարար հայազգուն վսե. Նուպար փաշային յանձնած է բոլորովին։

Յայտնի է թէ Երուսաղէմոյ կալուածական խնդրոյն նկատմամբ բռնուած սխալ ընթացքին՝ թեմական իրաւանց դժբաղդ վիճը ծագեցաւ. որ անշուշտ տեղի պիտի չունենար, եթէ կալուածական խնդրոյն համար՝ ի սկզբանէ Նուպար փաշային որոշմանը դիմուէր։ Այս վիճն ալ սիրով և քաղցրութեամբ միայն կրնայ կարգադրուիլ՝ ինչպէս Ս. Յակոբայ աթոռոյն. ուրիշ ճար չկայ. բայց բարձրասլաքիւ Խրտիվին նամակ գրելը և եկեղեցահայոյ հրամայելը թէ Իգնատիոս եպիսկոպոսը մինչև Սահմանադրութեան հաստատուելը Գահիրէ պիտի մնայ՝ սխալ ընթացք մը բռնելէ. որովհետև գործը ծանր կերպով բռնք կը ստանայ՝ և վերջապէս անոր որոշումը օգտակար չկրնար ըլլալ Ս. Երուսաղէմոյ վանուց։

## ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ, 12 ՄԱՐՏ

Օսմանեան ազգային երեսփոխանական ժողովոյ մը (Միլլէթ մէճլիսի) խնդիրը գործունէութեամբ կը յուզուի մօտերս մայրաքաղաքիս գաղղիարէն երկու գլխաւոր օրագրաց մէջ։ Բ-ՐԻԷ Ա'Օրիանը անցեալ տարիէ՝ ի վեր այս ընդհանուր ժողովոյն հաստատութեան հարկաւորութիւնը և օգտակարութիւնը կը քարոզէր։ Այս տարի Լ. թէ-րէի օրագիրն ալ ժամանակը հասած կը համարի որ այսպիսի ազգային ժողով մի, զոր Եւրոպոյ քաղաքակրթեալ գրեթէ ամեն ազգերը ունին, օսմանեան աէրութիւնն ալ ունենայ. որ քաղաքակրթութեան շաւղին մէջ արդէն մտած է ու կը յառաջադիմէ օրըստօրէ։

Բարձրագոյն Դուռը Վիլայէթներու վարչական նոր կարգադրութիւնները հաստատելով, որոնք ինչպէս յայտնի է, հիմնեալ են սահմանադրական դրութեան, այսինքն զանազան ատեանաց անդամոց ընտրութեան և վիճաբանական որոշմանց վերայ, Բարձրագոյն Դուռը կը սեմք անշուշտ կուզէր պատրաստել և կրթել ժողովուրդը՝ թէ՛ մահմէտական է եղեր և թէ՛ ոչ մահմէտական, ընտրութեան և ընդհանուր քուէարկութեան կանոնացը վրայօք. հետևաբար կը կարծուի թէ օսմանեան բարեխնամկատարութիւնը՝ երեսփոխանական ընդհանուր ժողովոյ մը և ընդհանուր քուէարկութեան հաստատութեան վերայ համակրական տրամադրութիւններ ունի. բայց միթէ այսպիսի սահմանադրական հիմնադրութեան մը ժամանակը հասա՞ծ է. ժողովուրդը բաւականապէս պատրաստուած և կարո՞ղ է ըստ արժանւոյն իր ընտրական պարտքը կատարելու։ Ահա խնդիրը այստեղէ. որուն որոշումը կայսերական իմաստուն կառավարութեան խոհական դատողութեանը կը վերաբերի։

—Հելլատայի օսմանեան դեսպան վսե. Ֆոթիաթիս—Պէյը՝ որ ամսոյս 5ին մեկնեցաւ Աթէնք երթալու, օգոստս. Սուլթանէն 1000 լիրա պարգև ընկալաւ իր ճանապարհորդութեան ծախսոյը համար։

—Ընդդիմոյ թագուհւոյն գահաժառանգ որդին Կալէսի իշխանը՝ ընկերութեամբ իր լծակից իշխանուհւոյն և իր ուղեկից պաշտօնատարաց՝ որք 24 հոգի են, ամսոյս 18ին կը սպասուի ի մայրաքաղաքս. ուր փառաւոր պալատ մի Նորին արքայազուն Բարձրութեան հրամանին ներքև դրուած է կայսերական կառավարութեան կողմանէ։

—Մայրաքաղաքիս զանազան ազգաց լրագիրները՝ ժամանակէ մը՝ ի վեր օրինաց խստութիւնը վրանին կը հրաւիրեն իրենց անիսկեմ ընթացքովը։ Սլէանպոլ կոչուած լրագիրը, որ թուրքերէն և յունարէն կրկին լեզուաւ կը հրատարակուի, հասարակաց բարեկարգութեանը վնասակար և դրդռիչ յօդուածներ հրատարակելուն համար՝ Բարձրագոյն Դրան հրամանաւը խափանուեցաւ ամսուան մը համար։

Դարձեալ Թէրջումէ կոչուած թուրքերէն լրագրին տնօրէն և Մէ-հիպդ անուն՝ նմանապէս թուրքերէն լրագրին համարատու պարոն Ենոն Հէվահիրճեանին մէջ դատ մի բացուելով՝ ի պատճառս թշնամալիր յօդուածոց, զորս յիշեալ լրագիրները իրարու դէմ կը հրատարակէին, երկուքն ալ գատապարտուեցան Տիվանը թէմիզ կոչուած ատեանէն. Թէրջումէն անօրէնը 5 լիրա տուգանք վճարելու և Մէ-հիպդի համարատուն ամիս մը բանտարկութեան։ Այսու ամենայնիւ կը լսեմք, թէ եաքէն մէկ ամիսը երեք օրի փոխուեր է։

—Պատերազմի նոր պաշտօնեայ վսեմա. Հիւսէին Աֆի փաշան՝ ընկերութեամբ Հոպարթ փաշային, ամսոյս 8ին հասաւ՝ ի մայրաքաղաքս Կիրիտէն գալով։

## ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

### Զմիւռնիա, 13 Մարտ։

Մահմէտականաց Գուրբան պայրամը երեքշաբթի օրէն սկսեալ չորս օր կատարուեցաւ սովորական հանդիսիւ և բարեկարգութեամբ։

—Բաղդրիս մաքսատանց տեսուչ վսեմա. Շէֆքէթ Պէյը՝ կայսերական կառավարութենէն թոյլատրութիւն ստացած ըլլալով, երկուշաբթի օրը աւստրիական շոգենաւով Կ. Պոլիս գնաց առժամանակեայ կերպիւ։

—Միևնոյն առթիւ մեծաշուք Տիրան էֆէնտին թագեան, որ տեղական կառավարութեան թարգման և խորհրդոյ քարտուղար է, յիշեալ մայրաքաղաքը գնաց առժամանակեայ կերպիւ։ Կը լսեմք թէ՝ ի բացակայութեան Տիրան էֆէնտիին, Տիլկրեան մեծարգոյ Զարեհ էֆէնտին անոր պաշտօնը պիտի վարէ փոխանորդաբար։

—Կը հաստատեն թէ Փարիզի հելլէնական դեսպան քիր Ռանկապէ, որ գիտնական ու երևելի ատենախօս մըն է, միևնոյն պաշտօնիւ Կ. Պոլիս պիտի երթայ. ուր արդէն հասած է քիր Բալէրեին, որ հելլէնական գործակատարի պաշտօնը պիտի վարէ մինչև դեսպանին գալը։

—Հելլէնայոց թագաւորը՝ Փարիզի Բաբրի օրագրոյն դրածին նայելով, երեսփոխանական ընտրութիւնները ըմբոնէ և նոր խորհրդանոյը բացուելէ ետև, մէկ ամսուան ճանապարհորդութիւն մի պիտի ընէ ու Եւրոպոյ գլխաւոր մայրաքաղաքները պիտի պտըտի։ Այս ճանապարհորդութիւնը հարկաւ քաղաքական նպատակ մըն ալ պիտի ունենայ։

—Բիրլոսէն Մթէնք երթալու երկաթուղոյն շինութիւնը կատարելապէս լմնցուցեալ անցեալ ամսոյն վերջը շոգեկառայ երթևեկութիւնը սկսաւ յաջողութեամբ։

—Ուշարէն կը գրեն թէ այս տարի անցեալ տարուանէն երկինքը սիրամանուեր է թէ՛ ամիսն, թէ՛ ցորեն և թէ՛ գարի. ուստի եթէ անակնկալ դժբաղդութիւն մի չհասնի, հունձքերը առատապէս պիտի վարձատրեն յիշեալ գաւառին երկրագործաց աշխատութիւնները։

—Կ. Պոլսոյ գլխաւոր սեղանաւորներէն և Շորայի Տիվանին անդամ վսեմաբարձ Մարդէն Պոլսոյ—Պէյը՝ ընկերութեամբ իր մեծաշուք լծակցին հինգշաբթի օրը հասաւ Իզմիր յիշեալ մայրաքաղաքէն գալով, և բարեհաճեցաւ Պէյլէրեան մեծարգոյ Յարութիւն էֆէնտիին տունը օթևանելու։

—Իր ազօրինաւոր գործոյը պատճառաւ Մանիսայի կառավարչութեան պաշտօնէն հանուած Ալլահտին փաշային հրաման եկաւ, որ Կ. Պոլիս երթայ։

—Կըսուի թէ կայսերական կառավարութիւնը 10 գրաստաւոր նաւ տպսպրած է յԵւրոպա զանազան մեծութիւնք։

—Աղեքսանդրիայէն կը գրեն մեզ թէ դերապա. տէր Սարգիս Զալալեանց արքեպիսկոպոսը Մարտի 6ին նոյն քաղաքը հասեր է Ռուսաց շոգենաւով և 13ին պիտի մեկնի եղեր Գահիրէ երթալու. ուր քանի մը օր մնալէ ետև՝ Աղեքսանդրիա պիտի վերադառնայ և պիտի շարունակէ իր ճամբորդութիւնը Երուսաղէմ երթալու։

Նորին բարձր Արքայազնութիւնը բարեհաճեր է Աղեքսանդրիոյ ազգային երկուքս վարժարանին այցելութիւն ընելու և երկու ժամէն աւելի աշակերտները մանրամասնաբար քննելով՝ շատ գոհ եղեր է անոնց յառաջադիմութենէն, ինչպէս նաև վարժարանին բարեկարգութենէն։

—Անձրևաբեր օդերը կը շարունակուին տասնըվեցերդ օրէ՝ ի վեր և ջրոյ յորդութիւնը ոչ սակաւ վնաս պատճառեց. մանաւանդ Ս. յորենի սերմանեալ դաշտերուն։ Իզմիրի մէջ, ուր դժբաղդաբար խոնաւութիւնը անպակաս է, անդադար անձրևները փոքրիկ լիճեր կազմեցին և ճանապարհները աւելցուցին շատ տեղուանք և մասնաւորապէս Բունթայի թաղը։ Մեր քաղաքապետական խորհուրդը ե՞րբ հոգ պիտի տանի տարեցաբար ճար մը գտնելու նոյն լիճերը և ճանապարհները անհետ ընելու համար. որոնք օդը ապականելով քաղաքիս բնակչաց առողջութիւնք վտանգի մէջ կը դնեն։

# ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Բամպակի առևտուրը ամիսէ մը՝ ի վեր կանոնաւոր և միանգամայն գործունեայ կերպիւ կը ընթանայ։ այսինքն գիները արտաքոյ կարգի փոփոխութիւններ չեն ընդունիր և շարունակ կվաճառին։ Այս շաբթու 3000 հակի չափ ծախուեցաւ 535էն մինչև 580 ղուրուշի կենտինարը՝ ըստ տեսակին։

Ուշնարի անլուայ բուրդին արժէքը 270–310–320 ղուրուշէ կենտինարը ըստ տեսակին և այս գիներով 200 կենտինար վաճառեցաւ։

Ճէհրին գիւրավաճառ է, և 80 տոպրակ ծախուեցաւ 18և18 1/4 ղուրուշի օխան։

Աֆիոնը, փալամուտը և Բէօքպէյան հանդարտութեան մէջ են և գնոյ առնօղ չկայ՝ ի պատճառս Լուրոպայէն հասած անյաջող լուրերուն։

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Այս լրագիրը երկու շաբաթը անդամ մը՝ շաբաթ օրը կը հրատարակուի։ Տարեկան գինը 120 ղուռուշ է ողջ դրամով, կանխիկ վճարելի։ Գուրս երթալու լրագրոյ ճանապարհի ծախքը՝ առնօղին վերայ է։ Ով որ կուզէ, կրնայ բաժանորդ գրուիլ Զմիւռնիա՝ Արշաղուսոյ դրատունը. իսկ ուրիշ քաղաքաց համար, ան կընչանակեմք լրագրոյս յարգոյ գործակալաց անուանքը, որ են.

Կոստանդնուպօլիս՝ մեծա. Կ. Ս. Իսթիֆանեան էֆէնտի, խմբագիր—տնօրէն Մասիս լրագրոյն։

Աղեքսանդրիա՝ տաղ Մկրտիչ Հալէպլեան։

Գահիրէ՝ Աբրահամ աղա Մուրատեան։

Յոպպէ՝ տաղ Սիմոն Ս. Մուրատեան։

Մոսկուա՝ տաղ Զարմայր Մսերեան։

Հալէպ՝ Յովհաննէս աղա Ս. Գիւրբճեանոֆ։

Պաղտատ՝ Անդրէաս հիւպատոսի փոխանորդ, տաղ Մինասկել մեհտեսի Մինասեան։

Կարմրեմ՝ պարոն Մ. Խ. Յովակիմեան։

Պաղավիա՝ պարոն Մանուկ Ղազանճեան։

Խմբագիր—տէր լրագրոյս,
Գ.-ԻՍ Գ. ՊԱԼԴԱՂԱՐԵԱՆ։

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐՇԱԼՈՒՍՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ